# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋև ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Լիբանանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

**խորացնելով երկու երկրների** միջև բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը,

**ցանկանալով** զարգացնել բնապահպանական համագործակցությունը կայուն զարգացման համատեքստում,

**հաշվի առնելով** ՄԱԿ-ի «Շրջակա միջավայր և զարգացում» համաժողովի (1992) կողմից հաստատված Ռիոյի Հռչակագրի և 21-րդ դարի Օրակարգի համապատասխան դրույթները, որոնք ամրապնդվեցին Յոհաննեսբուրգի Կայուն զարգացման համաշխարհային գագաթաժողովի (2002) քաղաքական Հռչակագրով,

**ընդգծելով** շրջակա միջավայրի պահպանության և պաշտպանության անհրաժեշտությունը՝ երկու երկրներում կայուն զարգացմանը և կյանքի որակի բարձրացմանը նպաստելու համար,

**ընդունելով** ջանքերի կենտրոնացման անհրաժեշտությունը երկու երկրների համար երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վրա, ինչպիսիններից է, օրինակ՝ մշտական անտառների պահպանման, ինչպես նաև անտառների բարելավված կառավարման, դեգրադացված հողերի և անտառների վերականգնման և անտառապատման եղանակով լրացուցիչ ածխածնի կլանման միջոցով ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումն անտառային սեկտորից,

**արտահայտելով** իրենց պատրաստակամությունը՝ գործադրել համատեղ ջանքեր և բարելավել իրենց երկրների շրջակա միջավայրի ու կյանքի որակը,

**հավատալով,** որ Հայաստանի Հանրապետությունն ու Լիբանանի Հանրապետությունը կարող են զգալի ներդրում կատարել միջազգային մակարդակով կայուն զարգացման հասնելու համար,

**համոզված լինելով,** որ բնապահպանության ոլորտում համագործակցությունը անհրաժեշտ է հասարակության բոլոր հատվածների համար,

**համաձայնեցին հետևյալի մասին**

### Հոդված 1

Սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ ՓՀ) նախատեսված է նպաստելու Կողմերի միջև ազդեցության համապատասխան դաշտերում բնապահպանության ոլորտում համագործակցության ընդլայնմանը և հիմնված է փոխադարձության, տեղեկատվության փոխանակման և փոխշահավետության սկզբունքների վրա:

### Հոդված 2

Կողմերը կխորացնեն իրենց փոխադարձ ջանքերը՝ բարելավելու համար բնապահպանական կառավարումը, գիտական և տեխնիկական հետազոտություններն ու կարողությունները՝ հետևյալ ուղղություններով.

ա) անտառազրկման ու հողերի դեգրադացիայի հետևանքով առաջացող ջերմոցային գազերի արտանետումների կրճատում (միջազգային տերմինաբանությամբ՝ REDD) և լրացուցիչ ածխածնի կլանում անտառների բարելավված կառավարման և դեգրադացված հողերի և անտառների վերականգնման միջոցով,

բ) Կողմերի միջև բնապահպանության ոլորտում համագործակցության այլ ուղղությունները ներկայացված են 1-ին հավելվածում:

### Հոդված 3

2-րդ հոդվածում նշված հարցերի լուծման համար Կողմերը կկիրառեն համագործակցության հետևյալ մեթոդները.

ա) տեղեկատվության փոխանակում,

բ) հրապարակումների մշակում և տարածում,

գ) տեխնոլոգիաների փոխանցում,

դ) գիտնականների և փորձագետների փոխայցելություններ,

ե) կարողությունների զարգացման ծրագրերի մշակում,

զ) համատեղ բնապահպանական նախագծերի իրականացում,

է) սեմինարների, աշխատաժողովների, գիտաժողովների, դասընթացների, այցելությունների համատեղ կազմակերպում,

ը) Կողմերի միջև համաձայնեցված այլ մեթոդներ:

### Հոդված 4

Սույն ՓՀ-ով նախատեսված գործունեությունը Կողմերը կֆինանսավորեն իրենց բյուջեի համապատասխան կետերով հատկացված միջոցներով՝ իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան: Յուրաքանչյուր Կողմ կհոգա իր մասնակցության հետ կապված ծախսերը, եթե չկան պատասխանատու մարմինների կողմից հաստատված, որոշակի գործողություններ իրականացնելուն ուղղված այլ այլընտրանքային ֆինանսական ռեսուրսներ:

### Հոդված 5

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը և Լիբանանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը նշանակվում են երկու Կողմերի կողմից՝ սույն ՓՀ-ն իրագործելու համար:

Երկու համակարգողները պարբերաբար կհամագործակցեն միմյանց հետ՝ հետագա զարգացմանը նպաստող

արդյունավետ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

**Հոդված 6**

Սույն ՓՀ-ի դրույթները չեն շոշափի Կողմերի՝ այլ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները:

Այն չի ազդի երրորդ պետությունների կամ տարածաշրջանային կազմակերպությունների նկատմամբ Կողմերի իրավունքների և պարտականությունների վրա:

Սույն ՓՀ-ի իրագործումը կիրականացվի յուրաքանչյուր Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան:

Սույն ՓՀ-ի մեկնաբանության կամ իրականացման հետ կապված ցանկացած վեճ կկարգավորվի Կողմերի միջև՝ քննարկումների և բանակցությունների միջոցով:

**Հոդված 7**

1. Սույն ՓՀ-ն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով Կողմերից մեկի կողմից վերջին գրավոր ծանուցման օրվանից:

2. Այն կգործի 1 (մեկ) տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի նույն ժամկետներով, եթե Կողմերից որևէ մեկը ՓՀ գործողության ժամկետի ավարտից առնվազն 90 (իննսուն) օր առաջ գրավոր չծանուցի մյուս Կողմին ՓՀ գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

3. Սույն ՓՀ-ի գործողության դադարեցումը ազդեցություն չի ունենա այն ծրագրերի և նախագծերի վրա, որոնց շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերվել նախքան այն դադարեցնելու մտադրության մասին ծանուցումը:

Ստորագրված է Երևան քաղաքում 2011 թվականի դեկտեմբերի 9-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն ՓՀ դրույթների մեկնաբանման առնչությամբ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

***Հավելված 1***

**Հայաստանի և Լիբանանի միջև բնապահպանության ոլորտում համագործակցության ուղղություններ**

**Ա. Կանաչ շրջակա միջավայր**

1) Գետավազանային բնապահպանական կառավարման պլաններ
2) Ջրային ռեսուրսների կառավարում
3) Պահպանվող տարածքների կառավարում
4) Բուսածածկի պահպանություն և վերականգնում:

Բուսածածկի (որի կայունությունը ենթակա է տարբեր գործոնների ազդեցության) պահպանության, մոնիտորինգի ու գնահատման, ինչպես նաև դրա վերականգնման համար անհրաժեշտ միջոցների հայթայթում ու տրամադրում: Այդ միջոցները ներառում են (սակայն չեն սահմանափակվում)՝ մոնիտորինգ, էկոլոգիական ու սոցիալ-տնտեսական կորուստների գնահատում, հետազոտություններ և ուսումնասիրություններ, ուսուցողական և կարողությունների զարգացման ծրագրեր, սարքավորումներ, ենթակառուցվածքներ, ինչպես նաև ազդեցություն կրած տարածքների վերականգնման լավագույն միջոցների կիրառում:

**Բ. Դարչնագույն/աղտոտված շրջակա միջավայր**

1) Կոշտ թափոնների կառավարում
2) Վտանգավոր թափոնների կառավարում
3) Կեղտաջրերի կառավարում
4) Մաքուր տեխնոլոգիաներ և արտադրություն:

**Գ. Բնապահպանական իրազեկում**

Բնապահպանական քաղաքականության ոլորտի տեղեկատվության տարածում:

**Այլ**

***Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 2012 թ. մայիսի 24-ին***